



# Ա Մ Ս Ա Գ Ի Ր

## ԸՉԳԵՅԻՆ, ԲԸՆԸՍԻՐԸԿԸՆ ԵՒ ԳՐԸԳԻՏԸԿԸՆ

ԱՌԱՋԻՆ ՏԸՐԻ. ԹԻՒ 1.

ՇՐՋԱՆ ՄԻԱՄԵԱՅ

ՅՈՒՆՈՒՆԱՐ 1866

### ԲԸՆԸՍԻՐԸԿԸՆ

#### Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

Չամանակը, որուն հին ու նոր դարուս փոխափոխաները չկրցան սահման մի տալ. եթէ ոչ բուսական յաջորդութիւն անուանելով զայն, որոնց միոյն մահը միւսին կեանքն է, ժամանակը որուն ներքեւ ենթարկեալ է բովանդակ արարչագործութիւն մի, բայց ի Մարչագործողէն որ արտաբոյ է ժամանակի և յառաջքան զամենայն յաւիտեանս, յաջորդութիւն մի է, կը համարձակիմ բտելու, դէպքերու, բարոյապէս սահմանելով զայն: Ապա ուրեմն ժամանակը փոփոխութիւն մի է, վասն զի դէպքերը ուրիշ բան չեն, եթէ ոչ փոփոխութիւն մի ի բարւոյ ի չարն, կամ ի չարէ ի բարին, մեծութենէ ի

նուատութիւն, յաղքատութենէ ի հարստութիւն, և փոխադարձաբար: Ասոնց նման և ուրիշ հազարաւոր իրարու ներհակ դէպքեր ժամանակիս մշտաթաւալ անիւներուն շրջանին հետ մէկտեղ իրարու վրայ գլորուեր, իրարու յաջորդեր են: Հարուստը աղքատացեր, ու աղքատը հարստացեր է. բազմադարեան տէրութիւն մի կործաներ, ու անոր տեղը նոր տէրութիւն մի կանգներ է. հին Ռաբելնին աւերակներուն մօտ՝ նոր Ռաբելն մի հիմնուեր է, առաքելութիւն մի թագաւորութեան փոխուեր է. սպարտիզպան մի՛ գրգռեալներու մէջ իշխանութեան աթոռ բարձրացեր է ծիրանիններու մէջ գգուելով: Ղզմարիտ Աստուծոյ երկրպագու ժողովուրդ մի, անխօս տարերքի կամ ամենաշնչին նիւթի մի դիմաց խոնար



հերով իւր ամենասիրելի զաւակն անգամ անոր զոհեր է : Սից մօր և միոյ արգանդի ծնունդ երկու հարազատներ՝ եղբայրական սիրալիր համբոյրներու փոխանակեր են վայրենի կատաղութիւն : Արիւնը ուշտ մոլեգնութիւն : Մէկ բաժակէ և մէկ անոթէ սնանոզ համարիւն ազգակիցք, նոյն բաժակին մէջ զերար խեղդելու չափ մտաբերեր են : Վերանորոգութեան մի թշնամի և մահուամբ չափ զանիկայ հալածող իբր ճշմարտութե ջերմ պաշտպան մի, նոյն վերանորոգութիւնը պաշտպաներ և անոր գլուխ կարգուեր է : Ո՞վ է զասնքը նողը, դէպքը, ուսկի՞ կախեալ են դէպքերը, և ո՞վ է այն դէպքերուն հրամայողը, ժամանակը : Արեմն մարդըս գերի է դէպքերու, քանի որ ժամանակի ծնունդ է. և մարդկութիւնը խաղալի է անոր ձեռքը : Արեմն մարդս ամենանուաստ արարած մի է, բնութեանը վիժած անարգ մէկ կենդանին է, քանի որ ենթարկեալ է իւր կամքէն դուրս եղած բուռն դէպքերու : Քաւ լիցի :

Մարդս աղնիւ արարած մի է գերաբուն իշխանութեան մի դորութեանը, և բնութեան ձեռքը յանձնուած. և պարգեւուած է իւրեան իմացականութեան լոյս, որոյ առաջ նորոգութեամբ կ'իշխէ բոլոր ենթալուսնէից. և որչափ որ կը զօրէ իւր լոյսը՝ կ'իշխէ նաև բնութեան վերայ, և նոյն լուսով փոխանակ գերի ըլլալու դէպքերու, կըտիրէ անոնց : Վասն զի գիտէ աղբատութեան մէջ սիրտ գոհ և միտք փարթամ ունենալ. գիտէ հարստութեան մէջ խոնարհ և արդարասէր լինել. ձախորդութեան մէջ համբերող և բարօրութեան մէջ իւր չափն ու անձը ճանչցող, և ըստ Առաքելոյն՝ գիտէ առատանալ և գի-

տէ նուազել. և այս ընթացքով դէպք մի որքան ալ ապստամբ ըլլայ մարդիկան կարողութենէն, կը նուաճի մարդ գոյս ինքնիշխանական զօրութեամբը : Մահը անոր հանձարասէր մտացն առնել կը կորսուցնէ իւր բոլոր խոյնթոցները. նա մահաւանդ կը քաղցնէրանայ անոր յիշատակը, ու կը սկսէ մարդարէին նման գոչել. « Տէր, երբեկից երեւեցայց երեսացդ Աստուծոյ » :

Իւր մարդկութեան պարտաւորութիւնները ճանչնալով անիկայ, իւր մտացն ու ոգւոյն բարոյական ուժը վերան ժողված՝ կը դիմէ խորխտալորե մահուան դէմ, ու կը կորցէ անոր ժախնիքներէն խումբ մի թշուառ արածներու, և կ'ուրախանայ յանձնուածն իւր բոլոր դառն ու սպառնալից դէպքերովը և ոչ միջման չափ կրնայ ձրմաշում մի պատճառել անոր մտացն ու սրտին վերայ : Բաւական է քիչ մի միտածէ, իւր ճակատին վերայի երակնէն ընն ու ջիղերը փափուկ մատուցնելով շօշափերով ու անոր ելեքարական կայծի նման ըլլալու մի տալով շոյ յիշեցնէ իրեն Աստուծանութեանը մի հրամանը, իմաստասիրութեան մի վճիռը « Օտանիք զքեզ » : Ղանչըցիք բու սկիզբդ, միտք առ քու վախճանըդ, և նոյն վախճանին հասնելու համար անհրաժեշտ միջոցներուն վերայ մտածէ : Փառաւորէ զմարդկութիւնը քու նմանուցդ վերայ. ձեռք երկնցուր անոր որ ճնշեալ կայ ժամանակին դէպքերուն ծանրութեանը տակ, մտալուտ մահուան սպառնաց լիքէն զանիկայ ազատէ քու իսկ անձինդ վտանգաւը : Քու իմաստուն վերստի կը խորհուրդներդ մի խնայեր շնորհէր ժամանակիս անյաջողութենէն վտանգը :



պէք մէջ գանուած նաւու մի զեկը դէպ  
որի նաւահանգստու թիւն ուղղելու .  
և անով բովանդակ ընկերական մար-  
մին մի ազատելու : Քու բարոյական  
ուժով մէկտեղ ժողովելով, և աշուր-  
աներէդ բաւական թափած արտասուք  
ներդ սրբելով, ջանա անձամբ դու  
կաքու այրիացեալ գլուխդ արժանա-  
ւոր պտակաւ զարդարես . բաւական  
ուէ որչափ վստահացար ժամանակին ,  
և ահա անիկայ իւր չարագուշակ  
դէպքերով խտրու այրու թեան վի-  
ճակի մէջ գբեզ թողուլ կրմտաբերէ :  
Վու թացիք պսակել քու երկու Քոյ-  
րերդ ալ, որոնք նոյն մշանջենաւորու  
թեան դէպքերուն զո՛ր ըլլալով, կար-  
ծես թէ քու մտատանջութիւնդ և ի-  
րաւացի սուգդ աւելցնելու կը մրցին :  
Այս տարագէպ՝ բայց խիստ սու-  
վորական եղած խորհրդածութեանց  
պատճառ կուտայ մեզ անցեալ ժա-  
մանակը, որ տակաւին երէկ սահեցաւ  
անցաւ մեր վերայէն . 1865 թուակա-  
նը, որ ՚ի տարեգիրս նշանաւոր պիտի  
համարի իւր մէկ քանի դէպքերովը :  
Առաջին տիեզերական ախտիւր մաղ-  
ձայու զու թեան, որ աշխարհիս երէք  
չորրորդ մասը տարածուելով, շատ  
զօհեր ընելով, շատերուն ալ սիրտը  
կսկիծով ու մորմնով լեցուց . գե-  
ղեցիկ յոյսեր խամրեցուց, և հիմե-  
նեան ջահերու տեղ՝ սգոյ կերոններ  
վառեց . անապատացուց քաղաքներ  
ու գիւղեր ու շէնցուց գերեզման-  
ները մահարձաններով . երկիւղով  
պաշարեց ռամիկը, շուարեցուց ի-  
մաստունը, և Ասկղեպիոսի ու Ահ-  
մանի բազուկները լքուց ու թուլ-  
ցուց՝ ծաղը ընելով անոնց բոլոր ար-  
հեստն ու գիտութիւնը : Ինկերական  
վիճակի մը բարելաւութեան համար  
գծուած ուրուագրութիւն մի, որ  
բարձրագոյն հաւանութեամբ միեւս

նուիրագործուած էր, ժամանակին  
յեղյեղուկ դարձուածոց և մարդ-  
կային իրարու հակառակ կիրքերուն  
ազդեցութեան տակ ինկած, փոխա-  
նակ նոյն ընկերութեան լաւութեան  
ու յառաջագիժութեան ծառայելու,  
կըսպառնայ բորբորվին գահավիժել  
դայն յանդունդս յուսահատութեան  
և մեռորինակ վիճակի մի դատաստա-  
տել :

Ժամանակն իւր դէպքերովը այս-  
պէս իրեն խաղալիկ ընելով մարդկու-  
թեան մի ճակատագիրը, և շաբաթը  
անգամ մի փոխելով այն յաւիտենա-  
կան ինքնագիծ տառերը, և նորը գը-  
րելով, և դարձեալ աւրելով, և այն  
յարափոխ ու սրտաթափ կացու-  
թիւնը բաւական չհամարելով, նոր  
վերք մի կ'աւելցնէ անոր վերայ, նոր  
սուգի մէջ կը համակեցնէ զինքը իւր  
հովիւէն ու հովուակիցներէն զըր-  
կելով . այնպիսի դէպքեր՝ որ խորե-  
նեան ծերունի Քերթողահօր սրտա-  
ճրմիկ ողբերը մեզ կրկնելու կը հը-  
րաւիրեն : Հարսը (սուրբ եկեղեցին)  
թէպէտ և կը համբերէ ողջախոհու-  
թեամբ զամուսնութիւն պահելով ա-  
նարատ հաւատոցն սրբոյն Վրիգորի,  
ինչպէս ի սկզբանէ քրիստոնէութե-  
մինչեւ ցարդ համբերեց անտանելի  
ճգամբք և սքանչելի նահատակու-  
թեամբք, այլ արդեօք իսպառ պիտի  
համբերէ՞ ընդդէմ սեղեխաբար յան-  
դգնելով յարձակողաց յանարատ ա-  
ռադաստն » . և արդեօք պիտի պահէ՞  
իսպառ իւր անբժութիւնը, ի բաց  
վարելով բռնութեամբ զօտար հայրն  
և զեկամուտ յորայն, որոնք յարեւ-  
մտից և ի հիւսիսոյ իրենց բազուկ-  
ները երկնցուցած՝ խնձղանօք համ-  
բուրելով զնա՝ անհարադատ գրկեր-  
նուն մէջ հեղձանելու փափաքը կ'ե-  
րագեն :




Այս օրինակ տրամալի խորհրդա-  
 ծուծիւններով լեցուն էր անցեալ  
 տարին . բոլոր ազգասիրաց և բարե-  
 պաշտ ազգայնոց ունն ու միտքը դար-  
 ձած էր դէպ յարեւելս, դէպ ի սուրբ  
 Լճմիածին մայր Աթոռն առաքելա-  
 կան, դէպ յԱթոռն Սըսոյ և Աղթա-  
 մարու, որոնք երեքն ալ այրիացեալ  
 իրենց Փեօայէն՝ տրամուծեամբ կը-  
 շնունն ազգին սիրաը, հարկ ի վերայ  
 դնելով անոր՝ չտալ տեղի Սուրմակ-  
 ներու ու Բըբիշոյններու, այլ յարու-  
 ցանել յորդուոց և ի թոռանցն Գրի-  
 գորի Ներսէաներ ու Սահակներ :

Իսկ ի մուտս նորոյ տարուոյս, երբ  
 կըտեսնեմք որ սոյն ազգային անյաջող  
 վիճակը առանց փոփոխութիւն մի  
 ընդունելու դէպ ի լաւն, կը շարու-  
 նակէ ի մեծ արտմուծիւն Ազգասի-  
 րաց, կը տեսնեմք միւս կողմէն ալ մը  
 խիթարութեան կայծ մի, ուրախու-  
 թեան նշոյլ մի, Սըբոյ Գահրբեանց  
 առաքելական Աթոռոյն վրայէն դէպ  
 առ որդիսն Հայկայ արձակեալ : Ոչ  
 ի պարծանս ինձ ասեմ, ըստ Պաւղոսի,  
 քաւ լիցի, այլ եթէ Ս. Աթոռոյս ներ-  
 կայ վիճակին վերայօք կոյ տեղի պար-  
 ծանաց, այն ի շնորհս ազգին է :

Երբ կը տեսնեմք այն զգալի փոփո-  
 խութիւնը միաբանական Սուխոսի և  
 ի հոգեւորական զարգացումն, երբ  
 կըտեսնեմք այն յառաջադէմ քայլերը,  
 զոր ծանր բայց հաստատուն ընթաց-  
 քով մի կ'արձակեն դէպ ի այն նպա-  
 տակը՝ զոր Նախնիքն մեր հաստատեր  
 էին, արդարեւ կ'ըզմայլի զգայուն  
 Հայու մի սիրտը, և պահ մի կանգ ա-  
 ռած կը սկսի խորհել տրամուծեամբ  
 մի անցելոյն վերայ և ճշմարիտ ուրա-  
 խութեամբ մի ներկայիս վերայ, որոյ  
 բարիքները առ աչօք չեն, այլ իրա-  
 կանութիւն : Ըռաւել զարմանալոյ  
 արժանի է հանձարասէր դիտողի աչ-

քին սուրբ Աթոռոյս ներկայ վիճակը,  
 երբ նկատելու ըլլայ՝ թէ այս յառաջա-  
 դիմութիւնները կը պարտաւորի երկ-  
 նաւոր Հօր մի աստուածային խնամոց  
 և ոչ թէ նիւթական արդիւնքներու  
 յորոց զուրկ է Աթոռս առ անաջողու-  
 թեան ժամանակին :

Աւրիշ ժամանակ առիթ պիտի  
 ունենամք սոյն յառաջադիմութեանց  
 վերայ խօսելու և նոր հաստատու-  
 թեանց վերայ մանրամասն տեղեկու-  
 թիւններ հաղորդելու մեր բարեսիրտ  
 Ազգին, որոյ սիրաը լեցուն է ակնկա-  
 լութիւններով, որպէս զի և մեք ըստ  
 մեր բաղձանաց պարտաւիճար ըլլամք,  
 և անոնց ակնաբեկութիւնը դարձը-  
 նեմք դէպ առ Սուրբ Աթոռս և առ  
 պաշտպանս նորին սուրբ Առաքեալն  
 Գահրբոս սիրելի աշակերտն Քրիստոս,  
 սի՛ր և արդարն Գահրբ՝ առաքելպա-  
 արն և փոխանորդն նորին, որոյ ի  
 պատիւ նուիրեմք և զմեր աշխատու-  
 թիւնս :



Ա.Օ. ԳԵՅԻՆ

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Աթոռոյս յառանգաւորաց  
 դպրոցին օր յառաջ ծաղկելուն և  
 կարգաւորութեանը համար ասկէ իբր  
 չորս հինգ ամիս յառաջ փութաց Ա-  
 մենապատիւ Սրբազան Պատրիարք  
 Հայրը իւր առաքելական անդրանիկ  
 օրհնութեանցը շրջաբերական կոն-  
 դակին հետ՝ միանգամայն և յիշեալ  
 Դպրոցին համար եւս աշակերտացու-  
 տղայք ժողվելու նպատակաւ առան-  
 ձին սույեալ նամակներով յատուկ  
 ցուցակներ եւս յուղարկել առաջ-  
 նորդանիստ գաւառները, որպէս զի  
 ըստ պայմանաց ցուցակին՝ իւրաքան-  
 չիւր գաւառներէ մէկ մէկ տղայ ընա-



րանօք որոշելով խրկին ի Ս . Ըթուս մինչեւ ի Ս . Օտարի . և ըստ սահմանեալ Կանոնաց սկսուի անոնց դասական ընթացքը : Քանի մի գաւառներէ , ինչպէս որ կը ընկնէ , ցուցակին սլոյմանայը համեմատ պատրաստած են ազայ .ք և խրկելու վերայ են , բայց կ'իմանամք որ քանի մի տեղ ալ մինչեւ հիմայ ոչ նամակներն և ոչ ցուցակները հասած են Գերաստիւ Ըսաջնորդաց և կամ Թագախան խորհրդոց մեծարոյ Ընդամայ ձեռքը : Ըստ ահամայ և կամ ո՛ր և իցէ պատճառաւ եղած զանցառու թիւեր բարեբեւը համար , արժան համարեցինք այս տեղ մասնաւոր կերպով նշանակել , և յորդորել զԳերաստիւ Ըսաջնորդները իւրաքանչիւր վիճակաց , որպէս զի առանց ժամանակ անցընելու փութան ըստ պայմանայ ցուցակին խրկել աշակերտացուները յառաջ քան զսուրբ Օտարի :

Յուցակը գեռ չընդունող վիճակաց դիւրութեանը համար կարեւոր կը դատուի կրկնել հոս թէ անոր և թէ ապեալ նամակին օրինակը :

**Պ Ը Յ Մ Ը Ն Ք**

Սորբ Ընդոյն ընդրելէ աշակերտաց ծնողաց կամ խնամակարաց կէտ :

1. Եկող պատանին պէտք է որ իւր հետն ունենայ Ս . Ըթուոյս կնքով \* կնքեալ ներկայ Տոմսակս , նշանակուած ըլլալով հինգ պայմանայ դիմացի պարապ էջին մէջ պահանջուած հանգամանքներն ամենայն ճրջտուութեամբ :

2. Եթէ որոշուած պատանին Տոմսակին մէջ նշանակուած հանգամանաց մէկուն դէմ պակասաւոր գըտ

\* Առանց կնքոյ եղած Տոմսակը խորհրդատու կը համարուի :

նուի , անմիջապէս ետ կը խրկուի :  
 3. Ճամբուն ծախքը ծնողք , կամ խնամակարուք , կամ տեղւոյն հասարակութիւնը պարտի հոգալ . նմանապէս ըստ երկրորդ պայմանին թէ որ ետ խրկուելու ըլլայ պատանին , դարձեալ իրենք պիտի հոգան ճամբուն ծախքը :

**Տ Ո Մ Ս Ը Կ**

Ընդունելի աշակերտաց Երեսնամեայ Երկրորդի սորբ Երեսնամեայ Ընդոյնի Երեսնամեայ Ընդոյնի :

**Հ Ա Ն Գ Ա Մ Ա Ն Ք**

Օր պէտք է ունենան աշակերտք ըստ կէտաց աներաժեղ պահանջմանց :

1. Հասակներն պէտք է ըլլայ տասն և վեցէն մինչեւ տասն և ութ տարեկան :

2. Բարբերին ու վարբերին անարատ ու պարկեշտ :

3. Սկրտող քահանայն պէտք է վկայէ անոր մկրտեալ ըլլալուն , նոյն պէս կնքահօրն անունը , և տղուն ծնած օրն ու տարին պէտք է նշանակուի :

4. Իւր մայրենի լեզուին հասարակ ընթերցանութեան ու գրութեան մէջ վարժ ըլլայ :

5. Որովհետեւ եկեղեցականութեան սահմանեալ է , պէտք է որ մարմնայ կողմանէ \* անարատ ըլլայ և անձամբ առողջ :

\* Անարատ կրուի տղայ մի , թէ որ չէ կաղխուլ , ներքին , ձեռնատ ( շօքք ) , միակնի , լուսնոտ ( սարալ ) , պնչատ ( սլուրունսրղ ) , շափն , կարճատես , գոնջ ( քել ) , և թըլատ :



ՏՊԵԱԼ ՆԱՄԱԿԻՆ ՕՐԻՆԱԿԸ

Ըստ անօրէնութեան Ս. Աթոռոյս, որպէս յայտ է, հաստատեցաք ի նորոյ և դասարան մի յատկացեալ վասն յառանդաւորաց, զորոյ և զաշակերտսն որոշեցաք անել ընտրանօք յիւրօքանչիւր վիճակէ մէն մի, որպէս զի զչնորհս Ս. Աթոռոյս ամենայն ազգ մեր վայելիցէ. և այն ըստ պայմանացն զոր ունիք տեսանել ի ներփակեալ թղթիս, որ է միանգամայն և Տոմսակ ընդունելութեան պատանւոյն: Առաքելով և սոս Աստուածաշնորհ Աղբայրութիւն ձեր օրինակ մի ի յիշեալ Տոմսակաց՝ կրնքեալ մատանեալ մերով, յանձնեմք Խոհեմութեան ձերում ընտրել և ի վիճակէ ձերմէ պատանի մի՝ ոչ ի հարբստաց, այլ յաւետ ի միջակայնոյ և ի չքաւորաց. միայն զի իցէ բարութն և վարութ պարկեշտ և յարմար եկեղեցականութեան, և վարժ գունէ ի հասարակ ընթերցանութեան: Եւ յայսմ ընտրութեան պարտի իւրօքանչիւր ոք վարիլ առանց աշտուութեան, ունելով կէտ նպատակի մտացն զօգուան սրբոյ Ակեղեցւոյս: Յետ գտանելոյ զոմն ի յարմարագունից, եթէ իցէ նա կարօտաւոր ծնողաց որդի, պարտ է գտանել նմա և խնամակալու զոք յերախտաւոր երեւելեաց ժողովրդեանն, և կամ գէթ ի հասարակաց արկեղէ հօգացցին ծախք ճանապարհի պատանւոյն:


Որպէս յայտ է, յերկրորդում էջի Տոմսակին պարտին յանդիման իւրաքանչիւր հինգ յօդուածոց նշանակել զհասակ, զվարս, զանուն մկրտող քահանային և զկնքահօրն, և զամ և զոր ծննդեան պատանւոյն. նոյնպէս և զկարողութիւն նորա ի մայրենի լեզուին ընթերցանութեան, և զանա-

բառութիւն նորին ի կողմանէ մարմնոյն. և որպէս յայտնի նշանակի երկրորդ պայմանաւ, եթէ պատանին գրասանիցի թերի միով և եթ ընդդէմ պայմանեալ պահանջանաց, առանց աշտութեան յետ առաքի:

Ի վերջէ յանձն արարեալ զընտրութիւն աշակերտելի պատանւոյն Խոհեմութեան աստուածաշնորհ Աղբայրութեանդ, առաքել զնոյն ի Ս. Աթոռս յառաջ քան զտուրք Օտար կրն, մնամք աղօթարար վասն ձեր և համօրէն Ազգիս:

Յերոսողէմ.

ՅԱթոռ Ս. Յակոբեանց, 1865:



Գ Բ Ը Գ Ի Տ Ը Կ Ը Ը

Եսայի վարժապետ Նէյնի:

Աղգային մատենագրութեանց և անոնց հեղինակաց պատմութիւնը որքան որ կարեւոր համարուած է այնքան եւս աւելի կարեւորագոյն ճշտութիւն կը պահանջուի պատմութեան պայմաններուն մէջ: Սեր ազգային մատենագրութեանց՝ թէ հեղինակութիւն ըլլան և թէ թարգմանութի, մեծագոյն մասը անտիպ կը մնան, վասն որոյ և աղգին գրագիտաց առաջը չըլլալով՝ ազատ մնացած են բանագատութենէ ու անաշտ քրնութեանս վերաբերեալ շատ մատենագրութիւններ, որոնց հեղինակները՝ առանց իրենց երկասիրութիւնները տպագրութիւն մէջ բերուելու, ոչ արդարացի քննութեան տակ ինկած են, և ոչ պատմութեան մէջ իրենց արժանաւոր յարգը գտած:



որու պատճառ՝ հարեւանցի կամ տհաս դատողութիւնը կրնայ ըլլալ, չըտեմ կարծեաց տարբերութիւնը՝ որ խիստ շատ անգամ կրնայ հանդիպել նոյն հեղինակին և իւր բանադատին մէջ տեղը, որ և է տեսութեամբ ալ ըլլայ կարծիքները՝ թէ՛ ըստ քաղաքականին, թէ՛ ըստ ուսումնականին և թէ՛ ըստ վարդապետականին :

Այս պատճառաւ է, որ մերադնեայ մատենագրաց մէջ կան ոմանք որոնց գրաւոր երկասիրութիւնները հրատարակուած չըլլալով՝ կամ բոլորովին անձանօթ մնացած են ազգային գրագէտներէն, և կամ իրենց բուն արժէքովն ներկայացուած չեն, վասն որոյ այս թերութիւնները լեցնելը պարտաւորութիւն համարելով մեր խմբագրութեանս, պիտի աշխատինք Վրացիտական յօդուածովս ժամանակ ժամանակ տեղեկութիւններ տալ այն մատենագրաց վերայ, որոնք կամ իրենք և կամ իրենց երկասիրութիւնները անձանօթ մնացած են ցարդ Ազգէն : Այս պարտաւորութիւնը կատարելը որքան որ կարեւոր է, այնքան ալ դժուարին կը համարի մեզ. բայց ճշմարտութիւնը որ մեզ առաջնորդ պիտի ըլլայ, և Ազգին ուսումնասիրաց սէրը կը քաջալերէ զմեզ ամէն դժուարութիւն յանձն առնուլ, յուսալով որ մեր այս աշխատութիւնը, որ մասն կը համարի Ազգային դպրութեան պատմութեանը, իբրու ճշմարտութեան բովէ ելած ի պէս՝ կրկին բանադատութեան տակ չեն ինկնիր :

Այս կարգի մատենագրաց մէջ, թողլով հիմակուհի մայ ուրիշները, խօսինք միայն Ասայի վարդապետին վերայօք՝ որ մականուամբ Աչեցի կը կոչուի, որոյ միայն անունը լսուած է, առանց իւր գեղեցիկ և ընտիր երկա-

սիրութիւնները ծանօթանալու Ազգին : Ասայի Սասունի՝ Նիչ ըսուած գաւառէն էր, ծնաւ և ապրեցաւ երեք տասներորդ դարուն վերջերը և չորեքտասներորդին սկիզբները : Իւր տղայական ժամանակէն ուսումնասէր ըլլալով և բարակամիտ՝ ինքզինքը սուաւ ուսման, և անձանձրոյթ կը պարապէր յընթացումս վարդապետական գրեանց : Իւր ժամանակին մէջ երեւելի էին գիտութեամբ և վարդապետութիւն Յովհաննէս Ազնկացին և Ներսէս Տարօնցի կամ Սըշեցին, և մեծն Վարդան, և այլք բազումք, որոնք աստուածային գրոց հմտութիւնք և երկնային առաքինութեամբք ճոխացեալ ըլլալով՝ իբրեւ ճրագ ի մէջ Ակեղեցւոյն Հայոց կը փայլէին : Ասայի վարդապետ Աչեցի աշակերտեցաւ վերոյիշեալ Ներսէս վարդապետին, որ միանգամայն յունական դպրութեան վարժ ըլլալով՝ հայկական գրագիտութեան մէջ ալ յառաջացած պիտի ըլլայ. թէպէտ և գրաւոր երկ մի չթողուց մեզ, այլ իւր աշակերտացը երկասիրութեանց մէջ կը փայլէ անշուշտ իւր գրիչն ալ և հայկական ճաշակը. վասն զի մի և նոյն հայեցի ընտիր ոճը եւս կը փայլէ իւր միւս երկու աշակերտացը գրուածոց մէջ, այն է Յովհաննէս վարդապետը Արճիշեցի, որ Սպինկեր կոչուեցաւ՝ 17 տարի միայն անհաց սոպ ուտելուն համար. երկրորդն էր Մխիթար վարդապետը Սասունցի, ճգնազգեաց և բարեբարոյ անձը, որ թողուցած է մեզ բաց ուրիշ գրուածներէ նա և ընտիր քարոզներ : Ասայի վարդապետ քիչ ժամանակի մէջ այնքան յառաջացաւ իւր մայ-

1 Տես ի ձեռագիրս Գրքատան Ս. Աթուոյս համար 72 :



բենի դարձութեանը մէջ, մինչեւ արեւելեան Հայաստանի մէջ ընդհանրական դասառու բնորոշելով, իբրեւ սեփական անուն իրեն յատկացաւ վարժապետական տիտղոսը, և նոյն անուամբ սկսան զինքը ճանչնալ: Յետոյ աւելցուցին անոր վերայ նաև Սեծ անունը, քովան զի ոչ միայն արտաքին գիտութեամբը և աստուածային գրոց մէջ ունեցած զարմանալի հմտութիւններով երեւելի էր, այլ առաւել եւս իւր անձնական ընտիր ձիրքերովն և նախանձելի առաքինութեամբբը, որոյ համար նոյն ինքն Հ. Սիբայէլ վարդապետ Չամչեան կը վկայէ՝ «այր հեղահոգի և խոնարհամիտ ոչ կոչելով: Վարժապետութիւն ըրած ժամանակ մի անգամայն և առաջնորդ էր Երեւանու մօտ Գայլէձոր ըսուած վանքին, ուր հարիւրաւոր աշակերտներ իւր չորս գին շարուած իբր յանսպառ աղբերէ իրենց ուսման ու գիտութեան ծարաւը կը յագեցընէին. և երանելին աննախանձաբար կը մատակարարէր իւր սիրելի սանուցը աստուածային բանին քարոզութիւնը և արտաքին ուսմանց վերաբերեալ գիտութիւնը. բայց ըստ մեծի մասին սուրբ գրոց վարդապետութեան մէջ կը կայանայր իւր գիտասիրտութիւնը և բանական գիտութեան տարերաց ըստ ներելոյ ժամանակին:

Ասոր ժամանակ նոր սկսեր էին երեւել Հայաստանի մէջ արեւմտական եկեղեցւոյ վարդապետներ, որոնց մէջ առաջին և երեւելի է Քարդոզլիմէոս լատին եպիսկոպոսը Քարոզչաց կարգէն: Սոյն վարդապետիս Հայաստան գալուն վերայօք այլազգ կը խօսի քան զՀ. Սիբայէլը, նա ինքն

1 Տես Պատ. Հայոց, Հատ. Գ. Կրեո 275:

Յակոբ վարդապետը որ իբր թարգման կը ծառայէր: Քարդոզլիմէոսին Քանզի կ'ըսէ՝ թէ Յովհան վարդապետ Քանչի, որ Ասայեայ վարժապետի յառաջագէմ աշակերտներէն մէկն էր, լատին լեզուին և Հռովմայ եկեղեցւոյ վարդապետութեան վերայ քիչ շատ անդեկութիւն ստանալով, ինչպէս սովորական է մեր ազգին, մասնաւոր միտում մի եւս կ'ունենայ լատինաց վերայ. և ուղեւոր աւելի մշակել յիշեալ լեզուն, կը ճանապարհորդէ դէպ յարեւմուտ կերթոյ յուխտ սուրբ Առաքելոյն Պետրոսի և Պաւղոսի շիրիմներուն, կը տեսակցի Հռովմայ եկեղեցւոյ վարդապետաց հետ, և ի դարձին իւրում ի հայրենիս՝ հետը կը բերէ վերայիշեալ եպիսկոպոսը. ուր հասնելով՝ Յովհան վարդապետ Քանչի մէջ, որ իւր ծնած գիւղն էր, քանի մի իւր խելքովը եկեղեցականներ կը գտնէ ու ժողով մի հաստատելով կը սկսի Հռովմայ եկեղեցւոյ վարդապետութիւնը քարոզել, անարդարանալի կերպով վարուելով իւր մայրենի ուղղափառ Եկեղեցւոյն դէմ, այսինքն՝ հիմնական փոփոխութիւն մի մտցընելով թէ վարդապետական և թէ ծիսական կանոնաց մէջ:

Ասայի վարժապետ, որ իւր հարազատ մօրը լուսաւորչական ճշմարիտ Եկեղեցւոյ հոգիաստին կաթամբը անեալ ու զարգացեալ էր զաճումն հոգւոյ ի շինութիւն ոչ իւր անձին՝ ըստ Առաքելոյն, այլ ազգային եկեղեցւոյն, որոյ էր անգամ. վասն որոյ երբ լսեց յիշեալ մեղադրելի ժողովոյն անիրաւ ձեռնարկութիւններն ու նպատակը, որ էր քակել ի հիմանէ հայկական Եկեղեցին, առ ոտն հար-

1 Եփես. Գ. 16:



կանելով անոր օրբազան աւանդու-  
թիւններն ու չնաչխարհիկ հայրենա-  
ւանդ կարգերն ու կանոնները, չկա-  
րաց ժուժել իւր սրտին մէջ, առաւ-  
իւր սքանչելի դրիչը ձեռքը ու սկը-  
սաւ դրել առ աշակերտն իւր ասլըս-  
տամբ՝ Յովհան Քոնեցցին, յանդիմա-  
նելով զինքը արդար բարկութեամբ  
և աստուածային նախանձով վա-  
ռեալ, որպէս զի ձեռնթափ լինի իւր  
յառաջագիր գործքէն, և քաշէ իւր  
ձեռքը անմեղ Եկեղեցւոյն վերայ յա-  
ւիտենական արատ մի բերելէ, որոյ  
համար երբէք չսխախտ արդարանայ  
սպագայ սերնդեան առջեւը, զեկե-  
ղեցին | ուսաւորչի երկփեղկելուն և  
մշտնջենաւոր կագ ու վէճ՝ ձգելուն  
համար ազգային ամբողջութեանը  
մէջ. ինչպէս և նոյն իսկ ժամանակին  
սկսած էին թէ՛ ի մեծն Հայոս և թէ՛  
ի Կիլիկիա Յակոբ Բ. կաթողիկոսին  
օրովը մեծ անկարգութիւն և կրօ-  
նական վէճեր ծագել: Եսայի վար-  
ժապետ իւր յանդիմանական գրու-  
թեամբը իմացուց անոր նաև Հայոց  
Եկեղեցւոյն ուղղափառութիւնը և  
ամբիժ դաւանութիւնը, յորդորելով  
Ք.Քոնեցցին՝ որ ինչպէս Եկեղեցւոյն  
վրդովմանը, նոյնպէս գարձեալ ինքը  
պատճառ ըլլայ անոր խաղաղութեւր,  
մեկգի իլելով չար որոմները՝ զոր  
Բարթողիմէոս լատին վարդապետին  
գործակցութեամբը սերմանած էր:

Պատմութիւնը մեզ կը սովորեցը-  
նէ, թէ Եսայի վարժապետին հոգե-  
շունչ խրատներն և հայրական ազ-  
գարարութիւնները բոլորովին անօ-  
գուտ եղան ընդդէմ Ք.Քոնեցցւոյն և  
իւր ընկերակցացը յամառ մտացն ու  
խցեալ ականջաց, որոնց և ոչ | Եւո-  
նի իշխանասաստ սպառնալիքներն ու  
գաւազանը զօրեցին դիժ մի անգամ  
չեղիլ տալ իրենց ապստամբ մտքէն:

Ի յաջորդէն:

Ազատ բարոյականութիւն:

Եւրոպիոյ, մանաւանդ Վաղղիոյ  
եկեղեցական և աշխարհական գիտ-  
նոց մէջ կարծեաց և վարդապետու-  
թեանց մասին որքան մեծ տարբե-  
րութիւն ըլլալը մեր ուսումնական  
ընթերցողաց շատին անծանօթ չէ:  
Եկեղեցականք ամէն ուսմանց և գի-  
տութեանց մայր և դայեակ Եկեղե-  
ցին կ'ընդունին և սուրբ Վրոց վար-  
դապետութենէ երբէք չեն չեղիք,  
իմաստասիրական ինքրոց լուծումը  
որչափ որ հնար է՝ կը ջանան սուրբ  
Վրոց համաձայն վարդապետութիւն մի  
տալ: Իսկ աշխարհականք բոլորովին  
հակառակը կ'ընդունին, այսինքն որ  
և է ինքիր մի թէ՛ բնական իմաստա-  
սիրութեան և թէ՛ բարոյական իմաս-  
տասիրութեան վերաբերեալ ըլլայ,  
իրենց իմացական լուսոյն և առաջ-  
նորդութեամբ բանին կ'ուզեն լու-  
ծել:

Սօստերս Ազատ բարոյականութի  
անուամբ յօդուած մի հրատարակ-  
ուեցաւ Վաղղիոյ քանի մի աշխարհ-  
հական | քաղբաց մէջ, և որովհետեւ  
այս յօդուածին վարդապետութիւնը  
կրնար զաւկի տէր մարդոց փնտել  
իրենց զաւակաց բարոյականութիւնը  
վտանգի մէջ դնելով, եկեղեցական  
խմբագիր մի սկսաւ պատասխանել  
յիշեալ յօդուածին և զգուշացընել  
ընտանեաց տէրերը նոյն վարդապե-  
տութեան սկզբունքներուն դէմ:  
« Ի՞նչ է այս Բարոյականութեան  
զանազանութիւնը, կը հարցընէ ե-  
կեղեցականը, որոյ անունը ազապ դը-  
րած է »: Եւ պատասխանը նոյն հա-  
կառակորդ խմբագրէն քաղելով այս-  
պէս կ'ըսէ. « Աշխարհիկ գիտութիւն  
մի է ազնուութեամբը, որ չունի և  
չկրնար կրօնական որ և է ենթադր-  
»



րու թեանց և կարծեաց հետ հասարակ բան մի ունենալ : Ասկէ կը մահաբերէ եկեղեցականը՝ թէ աշխարհական գիտութիւն ըսելը կղերականներու շվերաբերող գիտութիւն մի կ'ուզէ հասկըցընել : « Այլ ի՞նչ բանի մէջ կը կայանայ այս բարոյականը, կ'ըսէ, որ ամենեւին կրօնական կարծեաց հետ չմիաբանիր » :

Անք առանց դատաւոր նստելու երկու կարծեաց մէջ տեղը, մի միայն մեր ընթերցողաց գաղափար մի տալու համար ճշմարիտ բարոյականութեան վերայ եկեղեցական հեղինակին ունեցած կարծիքները մէջ կը բերեմք, որոնք կրնան լաւ նշմարուիլ իւր վիճաբանական յօդուածին մէջ : « Ուրեմն այդ կերպ սահմանելովք, կ'ըսէ, պէտք է իմանամք բարւոյն ու չարին բնազդեցական ծանօթութիւնը, այն քանի մի պարտաւորութիւններու ներքին իմացումը որ տըղուն սրտին մէջ գրոշմուած է ըստ չափու անոր մեծանալուն : Բայց եթէ այդ է անկախ կամ ազատ բարոյականութիւնը, հարկ չկայ զայն սորվեցընելու, և բոլորովին անօգուտ է ատոր վերայօք յօդուածներ և դրքեր հրատարակել սորվեցընելու համար մարդկութեան ինչ որ ինքն իւր բնութենէն գիտէ » : Այլ որովհետեւ Անէլը լրագիրը, (այս է մեր եկեղեցականին հակառակորդը,) կը սնդէ թէ Տէրութեան ուսումնարանաց աշակերտներուն հարկ է բարոյական դաստիարակութիւն դաստալ և կրօնականը զանց առնել, կ'ուզարկէ իրեն կղերը, թէ « գործնականին մէջ միթէ անհնարին չէ՞ անկայ : Որո՞նք են ապաքէն ազատ բարոյականութեան սահմանները, զայն դաս տուող վարժապետը ի՞նչ հիման վերայ պիտի հաստատէ զանի :

կայ. սոյն աշխարհական գիտութեան վերաբերեալ գաղափարական օրբայի նախները ուսկէ՞ պիտի գտնէ, երբևէ կը պարտաւորի այն գիտութիւնը կրօնական բոլոր կարծիքներէ հետոս մի պահել : Այս գիտութիւնը, ազատան խորհող լրագիրներն ալ հետեւին լրագրողները պիտի կարենան սահմանադրել : Կրնան գտնէ գրուածք մի մէջ բերել ի վկայութիւն, որոյ մէջ լրագրենց հասկըցածին պէս սահմանուած մի ըլլայ : Այս բանիս արդեօք կ'իկե՞նք թոնի ՅԼ. պարտոյ կոչուած գիրքը հարկ է իբր օրինակատիպ ընդունելով Բայց նայինք կրնայ ըսուիլ թէ հետեւ թանոս փիլիսոփային այս գիրքը զուտ բարոյական է, և անոր իմացումներու մէջ կրօնական գաղափարներ չկան : Ի՞նչ պիտի ըլլան արդի այն բարոյագէտներն, որոնք ակամայ են յանդէտս շատ անգամ հմտացած են Աւետարանին սկզբունքներուն : Այնք և ապերախտ մարդիկներ, որոնք բրիտանական կրօնիս յայտնութիւններ իրեն ընդունելով իրենց վարդապետութեանցը մէջ եղած բոլոր այնպիսի վեճ և սուրբ գաղափարները, կրնան ջանան մինչեւ Աստուծոյ գաղափարութեան անգամ կարծեաց և երթադրութեանց իշխանութեանը տակ ձգելու :

» Դիւրին է նախատեսել ազատ բարոյականութեան դասին ինչ ըլլակելը, զոր մեր փիլիսոփաները մայրնի դպրատանց մէջ հաստատել կ'ուզեն կրօնական դաստիարակութեան դարձուտն աեղը : Արժապետը այսպիսի դասախօսութեան յատուկ հիմն ըլկել լալը վարդապետական մարմին մի չէ գտնելով, պիտի հարկադրի անտարակոյս իւր մտքէն ըստ հաճոյից բան մի ստեղծել ու անոր վերայ հիմնելու իւր դասերը : Այսպէս իրեն բուն ներշնչութեանցը անձնատուր ըլլա :



ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

լով իրեն գործածութեանը լաւ սե-  
ւեակած որ և է բարոյականութիւնը  
ըրպիտի ուսուցանէ աշակերտացը : Բա-  
նբրևական չէր արդեօք աշխարհական  
նշանազգաբերի մի յարմարելու համար մի  
ուսմիայն պատուով ապրիլ սորվեցընել  
զամանոց : Բայց պատուաւոր մարդ ըլ-  
նիլալու համար եւս քանի քանի եղա-  
մանակներ կան :

մէջ » Անթիւ առարկութեանց մէջ  
Բաշքի զարնող ուրիշ առարկութիւն  
ւած մի եւս կայ : Սէտլը կը պահանջէ որ  
Սէրութիւնը իւր գպրոցներուն ա-  
րբաշակերտաց ազատ բարոյականը սոր-  
նելվեցընէ . ասիկայ յայտնապէս անոր  
հետ համար է , որ տղաքը անոնց այս ուս-  
ուսմունքէն շահուելով բարոյագէտքու-  
մնը պագիներ ըլլան , ինչպէս կ'ըսէ յի-  
նելու լրագիրը :

այն » Արդ , ինչ ազդեցութիւն կըր-  
նայ ունենալ այն ուսմունքը որ բնաւ  
ենկզբունքի մի վերայ հիմնուած չէ .  
այն նչ արժէք ունի այն օրէնքը՝ որ ոչ  
սիւսիւր հաստատութիւնն ունի և ոչ օ-  
ննեքինագիրը : Անօգուտ է տղու մի քա-  
պերոզել համեստութեան և բնական ա-  
յն առարկութեան այս մեկնութիւն չու-  
կնեցող ճապալ տեսականութիւնը ,  
արթէ որ անոր իրիզը ուրիշ տեղէ մի  
ուրայ չընդունի , և թէ որ ընտանեաց  
եղբայսերն և օրինակները այս տեսակ  
լրակութեան մի դրութեան դէմ չը  
լրակենան , պարտուց բնութիւնը ինք-  
նայնին կը տկարանայ , և կրից ձայնը ա-  
գեւեւելի ճոռոմ և համոզիչ կ'երեւի իւ-  
ր արեւն քան զիւր վարժապետաց գեղե-  
րիւցիկ ոճերը : Երեւելի գիտնական ե-  
րեւելեցականին մէկը իրաւամբք ըսած  
ն չէ ուրեմն , թէ Ո՞ր բարոյականը զօ-  
րաւորուր կրնայ ըլլալ , երբ բովանդակ  
առ բարոյականութեան հիմունքն ու հա-  
մեկտատութիւնը կործանած են » :

Ի յաջորդին :

Երուսաղէմ իբրեւ քաղաք՝ հին  
և նոր պատմութեանց , և իբրեւ վայր  
յորում իւր հիմնարկութենէն ի վեր  
զանազան նուիրական խորհրդոց տե-  
ղի եղած է և լեցուն է սրբազան ա-  
ւանդութիւններով , վասն որոյ թէ  
քրիստոնեայ և թէ անքրիստոնեայ  
ճանապարհորդներու այլմանատեղի  
եղած և բոլոր ադամաձին սրբուց  
մասնաւոր յարգանայն և կամ գէթ  
անոնց հետաքրքրութեան տեղի հա-  
մարուած է : Վասն որոյ ի սկզբանէ  
ի վեր թէպէտ և երեւելի մարդկանց  
և իմաստուն արանց ժամանակ ժա-  
մանակ պարզ այցելութեան և կամ  
բարեպաշտական նպատակաւ զուրբ  
Քաղաքը պատուերին նշանակուած  
կան պատմութեանց մէջ , սակայն այս  
մօտ տարիներս անոնց թիւը յաճա-  
խելով , արժանի համարած եմք ամ-  
սաթերթիս միջոցաւ յիշատակել ա-  
նոնց այցելութիւնները :

Անցեալ տարույս երեւելի ճանա-  
պարհորդաց մէջ նշանաւոր էր Անդ-  
ղիոյ Վեհափառ Թագուհւոյն օրդին  
Արթուր ծաղկահասակ իշխանը , որ  
իւր գաստիարակին և քանի մի երե-  
ւելի անձինքներու հետ եկաւ , ծրու-  
տեալ կերպով շրջեցաւ թէ սուրբ  
Քաղաքիս մէջ և թէ արտաքոյ եղած  
սուրբ տեղերը , վասն որոյ իւր թա-  
գաւորազն անձին արժանաւոր պա-  
տիւր չուղեց ընդունիլ կառավարու-  
թեան կողմէն : Մարտի 13 ին եկաւ ,  
ու քանի մի օրէն յետոյ մեկնեցաւ ի  
Յորդանան :

— Հոկտեմբեր 5 ին եկաւ ի սուրբ  
Քաղաքս Դամասկոսի նախորդ կու-  
սակալ Շիրուանի — զատէ Մէհմէտ  
Բիւշուի վառայն , մի միայն բարե-  
պաշտական այցելութիւն մատուցա-



ներու Իօմէրի հռչակաւոր Տաճարին, որ Սողոմոնի Տաճարին տեղը կառուցուած է, նմանապէս Ս. Սիօնի՝ ուր թաղուած են Դաւիթ ու Սողոմոն և այլ քանի մի թագաւորք Իսրայելի, եւս և ի Բեբրոն՝ ուր կայ տաճար մի ի յիշատակ առաջին Ահապետին Աբրահամու և Սաուլի, ուր տեղ է իրենց գերեզմաններն ալ: Իւր կրօնական սարտաւորութիւններէն ետքը՝ ընդունեց նա և յայցելութիւն իւր քաղաքիս հասարակութեց գլխաւոր անձինքները. ինչպէս նաև մեր ամենապատիւ Սրբազան Պատրիարգ Հայրն ալ, որուն քանի մի օրէն յետոյ բարեհաճեցաւ ինքն ալ փոխադարձ այցելութիւն ընելու քաղաքիս Վսեմ. կառավարիչ Իզդէթ փաշային հետ: Աորին վսեմութիւնը կրօնասէր, շերմեռանդ, ու գիտնական անձ մի է և ճգնազգեաց, ինչպէս շատերը կը վերկայեն, վասն որոյ խիստ իրաւամբք արժանի համարուած է Իվքաֆի միւշիւրութեան պաշտօնին, զոր վարելու համար յատկապէս հրաւիրուած էր Բ. Գրան կողմէն, և արդէն սկըսած է ի գործ դնել իւր պաշտօնը:

— Բեթլէէմի հարաւային կողմը Եփրատ ըսուած տեղւոյն մօտ Սողոմոնի ժամանակէ շինուած, ինչպէս կը հաստատէ աւանդութիւնը, երեք հատ աւազաններ կան իրարմէ իրր նետընկէց մի հեռու, և ամենէն մեծին երկայնութեան չափն է 619 օտք: Ասոնց մէջ մերձակայ բլուրներէն վազած անձրեւի ջրերը լեցուելով, Երուսաղէմի Իօմէրի Տաճարը կու գային յատուկ շինուած ազուգաներով, և բաւական ջուր կը մատակարարէին քաղաքիս բնակչաց: Յիշեալ աւազանները խիստ երկար ժամանակներէ ի վեր աւրուած և ճեղքուած ըլլալուն ջուր չեն պա-

րունակեր իրենց մէջը, վասն որոյ և քաղաքս ամառ ժամանակ խիստ մեծ նեղութիւն կրկրէ ջրի պակասութենէն: Եւ թէպէտ ասկէ իբր 15 տարի առաջ Յարութիւն Գալֆայի վերակացու թեամբ նորոգութիւններ եղան, սակայն երկար չաւեցին անոնք, անխնամ մնալով շուտով աւրուեցան և առջի վիճակին հասան. այս անգամ կ'իմանամք որ Վսեմափայլ Իզդէթ փաշայի յատուկ գործունէութեամբ նոյն ազուգաններն ալ հաստատուն կերպիւ նորոգուելու վերայ են. և յիշեալ աւազաններէն մէկը՝ որ արդէն շինուած է, բաւական ջուր պարունակած է նոր անձրեւներուն ուխտովը: Կը յուսամք որ շնորհիւ Ն. Վսեմութեան առաջիկայ ամառըս բաւական ջուր պիտի ունենայ մատակարարելու թէ Տաճարին և թէ ուրիշ քանի մի տեղերու:

— Նոյեմբեր 22 ին եկաւ ի Պօլսոյ Մէքսիկայի Տէրութեան Դեսպալտ Ղենէռալ Էնարտո Սարքէզը: Յիշեալ մեծաստիճան պաշտօնատարի սուրբ Բաղաքս գալուն նպատակն է նոր հիւպատոսարան մի հաստատել իւր կայսերական Տէրութեանը կողմանէ. և նոյն պաշտօնին յատկացեալ անձն ալ հետը բերած էր, այն է արժանապատիւ հիւպատոս Բեգրօ Տէլարօ: Յիշեալ ամսոյն 26 ին Ամենապատիւ օրբազան Պատրիարգը փութացաւ քանի մի երեւելի եկեղեցականներով և իւր աւագ թարգմանաւը անոր բնակարանը երթալ թիւր գալուստը և թէ քաղաքիս մէջ նոր հաստատուելք Հիւպատոսութեան պաշտօնը շնորհաւորելու Երկու օրէն յետոյ հաճեցաւ նորի Վսեմութի՝ Մէքսիկայի Վէհափայտ կայսեր արժանաւոր երեսփոխանը գալ մեր վանքը ի փոխադարձ այցել-



լուծիւն Սրբազան Պատրիարդ Հօր,  
 և երկրորդ անգամ եւս Հիւպատոս  
 սին հետ մէկտեղ զոր և ներկայացը  
 ներով Ն. Ամենապատիւ Սրբազնու  
 թեան՝ շնորհակալ եղաւ ի պատիւ  
 իւր ցուցուած յարգանացն և հիւ  
 րասիրութեան : Թէ առաջին անգա  
 մուն՝ որու ընկերացած էր նա և Ա  
 մենապատիւ Սրբազնութիւնը, և թէ  
 երկրորդ անգամին մեծ փափագա  
 նօք հաճեցաւ ջրջել թէ Ս. Յակո  
 բայ մայր Եկեղեցին, թէ Ս. Հրեշ  
 տակապետու վանքը, որ է Աննա քա  
 հանայապետի պալատը, և թէ ի Ս.  
 Փրկիչ, որ էր Կայիափայի տունը, և  
 հիմակ երկուքն ալ ուխտասեղիք են  
 Քրիստոսի բանտերուն պատճառաւ :  
 Բայ ի այս սրբավայրերէն սիրով պալ  
 տեց նա և նոր Ղեմարանը և Թան  
 գարանը, ուր գտնուած հնութեանց  
 հաւաքածոյքը տեսնելով խիստ գոհ  
 եղաւ, և իւր շնորհակալութիւնը  
 գրութեամբ յայտնեց Ս. Աթոռոյս  
 գեղեցիկ հաստատութեանցը վերայ .  
 որոյ բնագրին օրինակն ու թարգմա  
 նութիւնն է հետեւեալը :

ճապատիւ Հիւպատոսաց, նմանա  
 պէս և Մէքսիկայի Վսեմ. Գեօպա  
 նին և Անգլիկան եկեղեցւոյ Լպիս  
 կոպոսին ի շնորհաւորութիւն տա  
 րեմտինոցա, ինչպէս սովորութիւն է  
 փոխադարձ այցելութիւններով մե  
 ծարել զիրար : Ամերիգայի հիւպա  
 տոսը արդէն հրաժարած ըլլալով իւր  
 պաշտօնէն և դեռ իւր յաջորդը հա  
 սած չըլլալով, յիշեալ տէրութեան  
 փոխ — հիւպատոս մեծարգոյ Ղազա  
 րոս ազայ Արապիոնեանը ընդունե  
 ցաւ արժանաւոր պատուով զՆորին  
 ամենապատիւ Սրբազնութեան այցե  
 լութիւնը : Բարեբաղդաբար հոս կը  
 գտնուէր նա և ուխտի պատճառաւ  
 յիշեալ Ղազարոս ազայի եղբայր մե  
 ծարոյ Սիմօն ազայն, որ նոյնպէս Ա  
 մերիգայի և Իրուսիոյ տէրութեանց  
 փոխ — հիւպատոս է ի Յոպպէ : Եր  
 կու մեծարոյ հարազատք խիստ ար  
 ժանաւոր կերպիւ մեծարեցին ըզ  
 Սրբազան Հայրը ի դիմաց իրենց  
 Տէրութեանցը :

— Ամսոյ 28 ին սովորական հան  
 դէսով կատարեցաւ Սուրբ Յակոբայ  
 մայր Եկեղեցւոյ մէջ սուրբ Առաքե  
 քելոցն Քրիստոսի Յակոբայ և Յու  
 հաննու որդւոցն Արոտման տօնա  
 խրմբութիւնը : Բոլոր եկեղեցական  
 հանգէսներու մէջ նշանաւոր է սոյն  
 օրուան եղած հոգեւոր արարողու  
 թիւններն ու հանդիսավեհութիւնը,  
 և բարեպաշտ ուխտաւորաց սրտին  
 ու հոգւոյն մէջ անջնջելի կը տպաւո  
 րէ հոգեւորական զմայման հետ մէկ  
 տեղ երկնաւոր մխիթարութիւններ  
 ու քաղցր զգացմունքներ : Ամենա  
 պատիւ Լսայի Սրբազան Պատրիարդը  
 մատոյց սուրբ Պատարագը, նմանա  
 պէս ինքն եղաւ Թափօրին Հանդի  
 սատեար, որ ինչպէս յայտնի է՝ եկե  
 ղեցւոյ մէջ կը կատարուի պատարա

Le Général de division, Envoyé extraordinaire  
 et Ministre Plénipotentiaire de la Majesté l'Empe  
 reur du Mexique près de Sa Majesté le Grand Sul  
 tan, a eu l'honneur et le plaisir de visiter cette Bi  
 bliothèque, qui fait honneur à Monseigneur le Pa  
 triarche, aujourd'hui le 10 Décembre, 1865.

LEONARDO MARQUEZ.

Չօրպպետ զօրաբաժնի, նուիրակ արտաքց կար  
 գի և պաշտօնեայ լիազօր Ն. Վէհափառութեան  
 կայսեր Մէքսիկայի առ. ընթեր Ն. Վէհափառութեան  
 Մեծի Սուրբանին, ստոցաւ զպատիւ և զհաճութիւն  
 յայց ելանելոյ Գրքատանս, որ պատիւ բերէ Գերամե  
 ծար Պատրիարդին, այսօր ի 10 Դեկտեմբերի, 1865 :

LEONARDO MARQUEZ.

— Վերջին ամսոյս 20 ին՝ Ամենա  
 պատիւ Սրբազան Պատրիարդը եր  
 կու Լպիսկոպոսօք և քանի մի վարդա  
 պետօք գնաց Իրուսիոյ, Աստրիոյ,  
 Գաղղիոյ, Սպանիոյ, և Անգլիոյ մե



գէն յետոյ : Աոյն թափօրական հանդիսին մէջ կը գտնուին նաև երեք ազգաց եկեղեցականք ալ, այսինքն Ասորոց, Իսպառոց և Հապէշից, որոնք Հայոց ազգին հետեւակ կը համարուին : Աերկայ տարւոյս սոյն հանդէսին փառաւորութիւն տուողն էր ըստ մեծի մասին Պատրիարքի ներկայութիւնը, ուսկէ չորս տարիէն ի վեր է զուրկ էին թէ միաբանք և թէ ուխտաւորք :

Գարձեալ մեծ պատիւ ըրաւ հանդիսիս Աքքոսիկայի վսեմափայլ Բեօպանին ներկայութիւնը, որ բարեպաշտական ոգւով փութաց առաջակայ գտնուիլ, որու ընկերացեալ էին քաղաքիս Աքքոսիկայի նոր ընդհանուր հիւպատոս Տօն Փեգրօ տէ Հարօն, աւստրիական եկեղեցւոյ առաջին և երկրորդ վերապատուելի տեսուչները Տօն Հերմանօ Չիօքքէ, և Տօն Հերմանօ, և ուրիշ քանի մի նշանաւոր եւրոպայիք : Պատարագէն յետոյ Ամենապատիւ Սրբազան Պատրիարքը հրաւիրեց զվսեմափայլ Բեօպանը հետը եղող անձինքներով և արժանաւոր կերպիւ մեծարեց զերենք հրաւիրելով ի միասին ի ճաշ Միաբանութեան սեղանատունը : Ի՞նչոք այս հոգեւոր հանդէսներուն մէջ եթէ կար տրամալի բան մի, այն էր բարեպաշտ ուխտաւորաց նուազութիւնը, որոնց թիւը ընդամենը հազիւ կայր հարիւր յիսուն հոգի, որ ուրիշ տարիներու հետ քաղաքատելով՝ զգալի տարբերութիւն կը գտնենք :



Մեծիայի գերդաստանը :

Սատա — Գորա Պուգովինայի մէջ պզտիկ քաղաք մի է Հրէից՝ Յէրնովիչէն քիչ հեռու, որ Աւստրիոյ վերաբերեալ զբտութեան մի գլխաւոր քաղաքն է : Այս քաղաքս որդոտաբա Հրէաներուն սուրբ քաղաքն է, և անոր մէջն է Մեծիայի գերդաստանը :

Այս այն գերդաստաններէն մէկն է, ուսկէ պիտի ծնանի Մեծիան ըստ աւանդութեան և նախապաշարման Իսրայէլացւոց : Այս գերդաստաններուն սեփական անունն տրուած է Սատաք բառը որ Արդար կը նշանակէ : Կալիցիայի Պէլա, Փոսլաքիայի Քորք, ու Սանտովրի կառավարութեան Քողէնչիա քաղաքներուն մէջ շատ Սատաքներ կը գտնուին . և այս գերդաստաններուն մէջ ամենէն աւելի յարգութիւն ունեցողն է Սատա — Գորա բնակողը, որ Փոսլաքիայի մէջ ծնած բնիկ քաղաքացի է :

Աոյն գերդաստանիս հիմակուան գլխաւորը, որոյ Գաւթի մօրգարէնն ուղղակի սերիլը յայտնապէս ընդունուած է հազարաւոր Սրբեան Հրէաներէ, Իէպիշ Իսրօլքս անուն ծերունի անձ մի է, բայց քիչ նմանութիւն ունի սուրբ Գրոց աւանդած ծերունիներուն կերպարանացն ու կացութեան . սակայն զինքը յարգոյ ու մեծարելի ընող սա արժանաւորութիւնն ունի, որ Ռուսիոյ ու Իտալիոյ մէջ գտնուող Հրէից ամենէն հարուստն և ունեւորն է :

Իսրօլքայի գերդաստանը, որու հրաշքներ գործելու կարողութիւնը ընծայած է աւանդութիւնը, միլիօնաւոր գանձեր ու հարստութիւններ դիզած է, և իւր բնակած քաղաքը Սատա — Գորան յատուկ ուխտատեղի մի եղած է : Պուգովինայի



կալեցիոց Ռուս և Եհ Հրէաները , նոյնպէս և Մոլտավիոյ և Վալաքիոյ Հրէայք պիտի գան իրենց կենացը մէջ գոնէ անգամ մի ուխտ ընելու ի Սատա — Գորա , որ Երուսաղէմի ու Սէքքէի նման իրենց սրբազան քաղաքը համարուած է : Գատարկա ձեռն մարդ ամենեւին չներկայանար հոն :

Իսրօլքայի գերդաստանը Վիլնայի կառավարութեան Ռոզլէննա կոչուած քաղաքէն եկած են , և քառասուն տարի է որ Սատա — Գորայի մէջ հաստատուած են : Իւր բնակած ասորանքը արդարեւ Սոզոմնի արժանաւոր է , կ'ըսեն . թէ պէս և խեղճ ու ողորմելի խրճիթներու մէջ բարձրացած կանգնած է , ինչպէս և կը վայելէ տաճարի մի : Ապարանաց մէջ գտնուած զարդարանքներն ու կահ կարասիքը արեւելեան ոճով է : Ռսիին , արծաթն ու գորգերը ( խալիչէ ) երեսի վերայ են : Այս հոն նաեւ պարտելու համար պարտէղներ ու անկոյց և ծառերու ձմեռուան ցուրտէն պահպանուելու համար ջերմանոցներ : Այս բնակարանիս մէջ տիրոջ անձը , ապագայ ժամանակին թանկագին աւոթը , Գուլթի սերունդը , Իսրօլքաներուն գլխաւորը , Քէպիչ Իսրօլքան , պարզապէս խօսելով՝ բոլորովին տգէտ ու առանց դպրութեան մէկն է :

Ոչ քայլել գիտէ , ոչ խօսել և ոչ մտածել : Իւր ընտանիքը կը հաստատէ թէ մտերիմ բարեկամոց ձեռք պատգամներ կու տայ : Օրիքը տեսնելու համար , և մի միայն ընդ աղօտ անանելու նպատակաւ փողոցները մարդոց բազմութենէ կը փակուի , ու ասեղ ձգելու տեղ չմնար , մինչև տանիքները ձանկելով կ'ընեն , ու

ժամերով իրեն կը սպասեն :

Այս ճերուէին կին մի միայն և բաղնիսթիւ զաւկըներ ունի : Իւր աղջիկներէն շատը հարուստ Հրէաներու տուած է , որոնք ամենքն ալ ստիպուած են նոյն սուրբ քաղաքին մէջ տուն շինելու և հոն բնակելու : Թանկագին կերպաներ կը հագնին աղջիկները , և մանչ զաւակաց հագած պարեգօսները գեղեցիկ զարդերով յօրինուած են : Պլաթի տղաքը անհամար դաստիարակաց և դաստիարակուհեաց ձեռքը յանձնուած են , որոնք ամէն լեզուով կը խօսին և մեծ յարգութեամբ կը վարուին տղայոց հետ :

Հին ցեղապետը երբեմն երբեմն իւր ունիդրութեանը մարդիկներ եւս կ'ընդունի . անոնց դիմաց ամենեւին բերանը չբանար , այլ միայն կ'առնու ընծաները զոր մագերն ու հովիւները կը բերեն , որոնք եթէ անգամ մի դալ սկսին՝ ետեւին չբահամիր : Յատուկ գրագիրներ ունի որոնք բերողներուն առատածեռն ընծաներն ու նուէրները սուանձին արձանագրութեանց մէջ կը գրեն : Բազալպական տեսչութիւնը դէմ գրած է ու խտի եկողներուն մէկ քանի մաս նաւոր սյանդակ ձէսերուն , զոր երաժշտական նուագներով կը կատարեն :

Այժմու հալէւորին մեծ հայրը պատուոյ թիկնապահներ ունէր , որոնք քսան խալիք էին : Արկաղայոս կայսրը օր մի այս պապին հանդիպելով՝ արդիւնց իրեն որ զինուոր չբգործածէ : Իսրօլքա կայսեր կամացը դէմ կենալով՝ Քիէվի բերդը խըրկուեցաւ : Բայց իւր կուսակիցներուն և հարստութեան շնորհիւր Արկաղայոսի ձեռքէն խուսափելով , ազատեցաւ Քիէվէն , և գնաց հաս-



տատեց իւր բնական թիւնը Սատա —  
Գորայի մէջ :

Նիկողայոս կայսրը բողբ ըրաւ  
իւր գերին պահանջեց իբր ռուսա-  
կան հպատակ . բայց ստակը անկէ  
աւելի զօրաւոր բրդաւ , և Պուքու  
զինայէն տասներկու գեղացիք եր-  
գում ըրին թէ Իսրուքա Սատա —  
Գորա ծնած է :

Այժմու ծերունին եւս իբր դրա-  
մանենք ամբաստանուելով բռնուե-  
ցաւ ու բանա գրուեցաւ : Բայց  
հասարակաց կրթութեան դատաւո-  
րը պատուոյ տէր մարդ ըլլալով՝  
ինչպէս կարելի պիտի ըլլար որ  
բանտէն ու մահուան դատապար-  
տութենէ ազատի : Ստակի ուժով  
անոր պաշտօնը մեծցընելով փոխուե-  
ցաւ , և իրեն յաջորդող անձը քիչ  
շատ խօսքի պառկեցընելով և նրբա-  
միտ իրաւագէտ մի ըլլալով , ազատ  
թողուց Հրէից պայն ու մարգա-  
րէն , պատճառելով թէ խիստ տգէտ  
և անուս անձ մի ըլլալով , չկրնար  
պատասխանատու ըլլալ իւր վերայ  
եղած ամբաստանութեանը :

=====

Յաղթեալ Դժոխքո-ւի-ն մի :

Մարդոյս գլխոյն մազերն համբը  
այնքան դժուարին սեպուած էր միշտ,  
որքան որ դժուարին է իրօք՝ երկնային  
կամարի անթիւ աստղերը և կամ ծու-  
վու եղբրքը եղած աւազը համբել,  
և թերեւս զանիկայ մտաբերողն ալ  
յիմարի տեղ կը գնէինք : Սակայն գրու-  
նուերէ մօտերս Եւրոպայի մէջ դիտ-

նական Գերմանացի պարոն մի , որ այ-  
նհնարին աշխատութիւնը յանձն է  
աւեր , և մարդկային ազգը այսպիսի  
մէկ տարակուսէ ազատելու համար  
ինչիրը լուծեր է չորս կանանց գըլ-  
խուն վերայի զանազան գունով մա-  
զերը համբելով . և անկէ գործական  
մահաբերութիւն եւս կը հանէ : Այս  
փորձին ենթակայ եղող չորս գըլուխ-  
ները հետեւեալ թիւերը կը նշա-  
նակեն .

- Դեղին . . . 140.419 մազ :
- Թուխ . . . 109.440 "
- Սեւ . . . 102.962 "
- Կարմիր . . . 83.740 "

Այս ալ նկատուած է , որ չորս տե-  
սակ գիտակներն ալ թէպէտ և թը-  
ւով անհաւասար , բայց կշիռքով  
հաւասար են եղեր , թուոյն տարբե-  
րութիւնը մազերնուն հաստատու-  
թեամբը հաւասարակշռուելով : Այս  
ջակ հաշուով կնկան մի գլխուն մա-  
զերը տասն և չորս ունկի կը կշռէ  
այսինքն 112 տրամ :

=====

Օւրմանայի Ժանուար-մ :

Անցեալները սուրբ Պրանչիսկո-  
քաղքի Միննա կօշուած փողպէ  
քաղքապահ զինուորներէն մէկ  
մարդոյ ձախ ձեռքի երկու մատ կ  
գտնէ ու կը տանի կը յանձնէ քաղա-  
քապետին . և անմիջապէս ծանու-  
ցում մի կը հրատարակուի , թէ որո-  
ր կը վերաբերի այն երկու մատերը  
երթայ զանտք խնդրէ աւանդ դըր-  
ուած տեղէն :



uy  
in  
hu  
su  
ll  
su  
u  
u  
u

nt  
p  
u  
z  
u  
u  
su  
t

ly  
y  
t  
u  
u  
u  
u  
u  
u

1998



# ՑԱՆԿ

## ՅՈՒՆՈՒՄ

Ուղերձ առ Վսեմ. Կառավարիչ Ս. Քաղաքիս . . .	Ա
Յայտարարութիւն . . . . .	Գ

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ժամանակ . . . . .	1
-------------------	---

### ԱԶԳԱՅԻՆ

Ազգարարութիւն, Ս. Աթուոյս Ժառանգաւորաց դպրոցին համար . . . . .	4
---	---

### ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

Ետայի վարժապետ Նչեցի . . . . .	6
--------------------------------	---

---

Ազատ Բարոյականութիւն . . . . .	9
--------------------------------	---

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ . . . . .	11
-----------------------------	----

ԱՅԼԵՒԱՅԼՔ . . . . .	14
---------------------	----

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Միօնը ամսէ ամիս կը հրատարակուի մէկ 16 էրևոյ բաղկացեալ ութուսու  
թղթով :
- Բ. Տարեկան գինն է մէկ ու կէս արծաթ Կէճիտիէ :
- Գ. Ճանապարհին ծախքն առնողին վերայ է :
- Դ. Զատ տետրակ առնել ուղղը, պէտք է ամէն մէկ տետրին Յ դահեկան  
վճարէ :